

## ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՀՈՒՇԱՐՉԱՆԸ



Հայոց պատմության համար վճռորոշ պահին՝ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, Ներսես Աշտարակեցին կարողացավ ազգի կարող ուժերը ոտքի հանել, միավորել ու տրամադրել պատմական քայլի՝ Արարատյան աշխարհի փրկության գործին: Ներսես Աշտարակեցու համոզմամբ՝ դա մեծ ճանապարհի սկիզբն էր միայն, որովհետև «**փրկութիւն աշխարհի մերոյ**» և «**վերանորոգութիւն ընդհանրական ազգի հայոց**» գույշ հասկացություն-

ները անբաժանելի էին նրա գիտակցության մեջ: Դա էր պատճառը, որ Երևանի ազատագրումից և ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո Ներսես Աշտարակեցին ցարական վարչության կողմից ենթարկվեց հալածանքների ու 15-ամյա փաստացի աքսորի, որոնք սակայն չընկճեցին նրա աննկուն ոգին: Կյանքի վերջում, արդեն որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, Ներսես Աշտարակեցին շարունակեց իր լուսավորական և շինարարական աշխատանքները՝ նոր շուք հաղորդելով Սուրբ Էջմիածնին:

Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին (Թորոս Հարությունի Շահազիզյանը) ծնվել է 1770 թվականին, Արարատյան աշխարհի Աշտարակ գյուղում՝ հոգևորականի ընտանիքում: Նա առաջնորդի բոլոր տվյալներով օժտված անհատականություն էր, որի հոգին ցավում էր իր ժողովրդի համար:

Հայոց պետականության հիմնաքարերը ստեղծելու մեծ գործի խորհրդանիշ Ներսես Աշտարակեցու հուշարձանի կարիքը մեզանում վաղուց էր զգացվում: Ուստի, քանդակագործ Գետիկ Բաղդասարյանի և ճարտարապետ Ջիմ Թորոսյանի տարիների քրտնաջան աշխատանքով հաջողվել է ստեղծել մեծագործ կաթողիկոսի բա-

1 Ավելի մանրամասն տե՛ս Գևորգ Խուրդինյան, Ներսես Աշտարակեցու հուշարձանը, «Հայոց աշխարհ», 2009, 7 փետրվարի, N 22:

զալտակերտ կոթողը և 2008 թ. ամռանը լուռ ու անաղմուկ տեղադրել Աշտարակի գլխավոր հրապարակում: Եվ միայն մեկ տարի անց, անհարկի ձգձգումներից հետո, հուշարձանը բացվել և օրհնվել է Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների կողմից: Այս իրադարձությունը հույս է ներշնչում, որ Ներսես Աշտարակեցու նման մեծ անհատը իր քարակերտ կերպավորմամբ կրկին կծառայի ժողովրդին և կխոչընդոտի խզմանը՝ նախորդ դարաշրջանի հետ:

Գետիկ Բաղդասարյանը քաջ գիտակցում էր իր առջև ծառայած դժվարությունները. նա պիտի լրացներ Ներսես Աշտարակեցուն մփրված աշխատանքների շարքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր պայմանները կերպարի մեկնության նոր առանձնահատկություններ են պահանջում:

Կերպարվեստում Աշտարակեցուն լավագույնս պատկերել է Հակոբ Հովնաթանյանը, որին հաջողվել է հաղորդել կաթողիկոսի մարմնի փխրությունն ու հոգու խոցելիությունը, ինչն արտացոլված է այդ մեծ հոգևոր պետի ռեմբրանդոյան տիպի ողբերգական աչքերում: Նա ասես կանխագգում է վերահաս աղետը, բայց արժանապատվորեն ու հնազանդորեն կրում է այդ ողբերգական զգացումից ծնունդ առնող միայնությունն ու ցավը:

Քանդակագործ Գետիկ Բաղդասարյանն իր առջև այլ նպատակ էր դրել. վերականգնել Ներսես Աշտարակեցու բազմակողմանի կերպարն իր ամբողջականության մեջ, որն արդիական է մեր ժամանակներում: Ներսես Աշտարակեցին երբեք չի կորցրել Հայաստանը հզոր և միասնական տեսնելու հույսը: Քանդակագործը պետք է խտացներ դարերի փորձով ծանրաբեռնված այդ միտքը: Ուստի մեր առջև վեհորեն զուսպ կաթողիկոսն է՝ հավեր-

ժացած հանդիսավոր սևեռունության մեջ: Քանդակագործի սիրած նյութը՝ բազալտը, լինելով կարծր քար, ինքն է թելադրել ձևի ընտրությունը՝ պարզեցված ու տնտեսված:

Կաթողիկոսի կերպարը շնչում է մոնումենտալությամբ ու ծանր հանդարտությամբ: Ներսես Աշտարակեցին ամբողջովին տազնապալի մտքերի իշխանության տակ է, ինչն արտահայտված է նրա կեցվածքում: Ծանրություն, հավասարակշռություն, զանգվածի կայունություն, ճակատայնություն. ահա այն ազդակները, որոնք բնութագրում են կաթողիկոսի կեցվածքը: Նրանում զգացվում է նաև մեղմություն ու միաժամանակ՝ աննկունություն, որոնք ծայրաստիճան լարվածությամբ արտացոլված են հոգևոր անձին բնորոշ ժեստում: Հոգեբանական մտազբաղության տեսանկյունից այդ ժեստն ի գորտ է ընկալման երկարատևություն ասպառվել: Կաթողիկոսի արձանն անհողորդ է իր միակու-



ռության, անհաղորդության և չարին ու դաժանությանը դիմակայելու անասան վճռականության մեջ:

Քանդակագործ Գետիկ Բաղդասարյանի համար այս միաձույլ լիակշռությունը հոգևոր բովանդակության է վերածվում: Ներսես Աշտարակեցու կերպարը լեցուն է հսկայական ինքնատիրապետմամբ: Կամքի հերոսականությունը հասել է մարդկային էության խորքերը, իսկ քարե հանդերձանք հագած կաթողիկոսի նուրբ ու բարդ հոգևոր կազմությունը հուսալիորեն դիմակայում է դրսի ճնշումներին: Նա լռությամբ մեզ ոգեկոչում է փորձությունների պահերին լինել համարձակ և չվախենալ ապագայից:

Ներսես Աշտարակեցու կերպարը ժայռի պես անընկճելի է՝ աշխարհի ծովում տազնապներով շրջապատված: Գետիկ Բաղդասարյանը կարողացել է խուսափել հուշարձանի զանգվածի մեկուսացվածությունից: Բրակապատ ու լայնոտ առանձին հատվածները, որ կոշտ մշակման օգնությամբ են ստացվել, կենդանություն ու շունչ են տվել քարին: Կերպարում հատուկ զգոնություն է մարմնավորված, զգոնություն՝ մեր անբարենպաստ ժամանակների, նրա տազնապների ու սխալների հանդեպ:

Կերպարը կենդանի է և այդ դողդոջ կենդանության մեջ առկա է նրա լավատեսությունն ու ակտիվ ուշադրությունը ժամանակի անհաստատության և փոփոխականության նկատմամբ: Հայացքով Ներսես Աշտարակեցու ամբողջ կերպարն ընդգրկելով միայն

կարելի է զգալ բանականության հաստատությունն ու հերոսականությունը:

Սա Պաշտպան Հայրենյաց պատվանունը ստացած մեծ հայի բնութագիրն է, որը երբեմն անհնարին խնդիրներ էր դնում՝ քաջ գիտակցելով դրանց առջև կանգնած արգելքները, բայց չընկրկելով իր ընտրած ճանապարհից: Այդ մասին նրա խոր ստվերված աչքերն են ասում: Մյուս դիմագծերը, որ վեղարով են ծածկված, խորհրդավոր են ու փոփոխական: Գետիկ Բաղդասարյանը կարողացել է հոգեբանական այնպիսի ենթատեքստ հաղորդել կերպարին, որ սովորաբար հատուկ չէ մոնումենտալ հուշարձաններին:

Ոչ թե արդարության ասպետ ու գաղափարի ռոմանտիկ քարոզիչ, այլ իրատեսության, սթափության, ժողովրդի մտքի ու արիության ամենօրյա ու անդադրում պայքարի մարմնավորում՝ այսպիսին է Ներսես Աշտարակեցին Գետիկ Բաղդասարյանի մատուցմամբ:

Որպեսզի իրականությունը մեզ համար վերստին մղձավանջ չդառնա, Ներսես Աշտարակեցու բազալտե հուշարձանը իր պատգամն է հղում յուրաքանչյուրիս՝ առանձին-առանձին. ոչ ոք, մեզանից բացի, չի կարող ու չի ցանկանա օգնել մեզ, վանեք սին պատրանքները, եղեք ուժեղ, մի՛ լքեք հայրենիքը, կրեք մեր ընդհանուր խաչը, որը նախախնամությամբ սահմանված մեր ուղին է այս աշխարհում\*:

## THE MEMORIAL OF NERSES ASHTARAKETSI

*Marina G. Stepanyan*

\*«Վէմ»-ի խմբագրական խորհրդի անունից շնորհավորում ենք Ներսես Աշտարակեցու հուշարձանի հեղինակներին և առաջին հերթին՝ քանդակագործ Գետիկ Բաղդասարյանին Հայաստանի նախագահի 2009 թվականի մրցանակին արժանանալու համար: Խմբ.